



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N _____

_____ 2012 թ.

<Սապֆիր> ԲԲԸ գլխավոր տնօրեն
պարոն Բ. Պետրոսյանին
հասցե՝ Կոտայքի մարզ, Նոր Հաճն,
Ա. Հարությունյան 1

Կից ուղարկվում է Ձեր 30.12.2011թ. գանգատի վերաբերյալ ՀՀ կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման
հանձնաժողովի 17.01.2012թ. թիվ 2/3 որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման
հանձնաժողովի նախագահ՝

Տ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

«ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/3

17 հունվարի 2012թ.

Քննարկվեց <Սապֆիր> ԲԲԸ 30.12.2011թ-ի գանգատը «ՀԱ ՊԵԿ ՕՀՎ 30.06.2011թ. թիվ 1013096 ստուգման ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն «ՀԱ ՊԵԿ նախագահի 20.01.2011թ. թիվ 1013096 հանձնարարագրի «ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <Սապֆիր> ԲԲԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 30.06.2011թ-ին կազմվել է 1013096 ստուգման ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 315.269.853 դրամ:

«ՀԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> «ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի <ա> ենթակետի համաձայն վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե. <ա> անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը>:

Հաշվի առնելով, որ <Սապֆիր> ԲԲԸ գործով «ՀԱ ՊԵԿ Հետաքննության վարչությունում նյութեր են նախապատրաստվում քրեական գործի հարուցման անհրաժեշտությունը պարզելու նպատակով, Հանձնաժողովը գտնում է, որ անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> «ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի <ա> ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ <Սապֆիր> ԲԲԸ 30.12.2011թ-ի գանգատի հիման վրա «ՀԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» «ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> «ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի <ա> ենթակետի դրույթներով՝ <Սապֆիր> ԲԲԸ 30.12.2011թ-ի գանգատի հիման վրա «ՀԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ